**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

**ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ**

**ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ**

**ԳԱՌՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ**

*(Հաշվետու ժամանակահատված՝ 2025 թվականի մարտի 26-ից մինչև 2025 թվականի ապրիլի 25-ը)*

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՈՒՆ**

Ես՝ Հայտարարագրերի վերլուծության վարչության փորձագետ Լիլիթ Հակոբի Սիմոնյանս, հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ ստորև ներկայացված աշխատանքները.

1) **Հայտարարագրերի ուսումնասիրության և համալիր վերլուծությունների շրջանակներում իրականացված գործառույթներ.**

ԶԼՄ կայքերում հրապարակված 5 նյութի հիման վրա իրականացրել եմ հինգ պաշտոնատար անձանցից և նրանց ընտանիքի անդամներից ստացված պարզաբանումների գնահատում, որոնց հիման վրա կազմել եմ 16 գրություն՝ ստուգման ավարտի և լրացուցիչ նյութեր հայցելու վերաբերյալ: Ինչպես նաև կազմել եմ պետական մարմիններից հարցում կատարելու մեկ պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների վերաբերյալ գրությունները:

Կազմել եմ ռիսկային չափորոշիչներով սահմանված 1 պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամի կողմից հայտարարագրված 4 հայտարարագրերի վերլուծության արձանագրություն:

Համալիր վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ կազմել եմ պարզաբանումներ հայցելու 5 գրություն, իրականացրել եմ մեկ պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամի կողմից ստացված երկու պարզաբանման գնահատում:

Վերլուծությամբ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ կազմել եմ պարզաբանում հայցելու վերաբերյալ 2 գրություն, իրականացրել եմ պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների կողմից ստացված 6 պարզաբանումների գնահատում, որոնց հիման վրա կազմել եմ 8 գրություն՝ ստուգման ավարտի վերաբերյալ:

Իրականացրել եմ ռիսկային չափորոշիչներով սահմանված 4 պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների վերլուծության նյութերի փաստաթղթավորում:

Կազմել եմ ՎԻՎ արձանագրության հրավերի 4 գրություն և 4 ՎԻՎ արձանագրություն:

Կատարել եմ Բաժնի պետի կողմից տրված հայտարարագրման բաժնի գործառություններին վերաբերող այլ ընթացիկ հանձնարարություններ:

**Հայտարարագրերի վերլուծության վարչության**

**փորձագետ՝ Լիլիթ Սիմոնյան**

**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

(Հաշվետու ժամանակահատված՝ 26.03.2025թ.-25.04.2025թ.)

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի Հայտարարագրերի վերլուծության վարչության փորձագետ Լիլիթ Սիմոնյանի կողմից 2025 թվականի մարտի 26-ից մինչև ապրիլի 25-ն իրականացրած աշխատանքները՝ ըստ ամփոփիչ փուլի արդյունքների գնահատվում է.

1. Բավարար
2. Լավ
3. Գերազանց

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
Հայտարարագրերի վերլուծության
Վարչության հայտարարագրման
բաժնի պետ՝ Գառնիկ Ավետիսյան